

դար Ս. Խաչը՝ ինչպէս նաեւ լուսապայծառ գմբէթներով զարդարուած եկեղեցիներուն վրայ. այլուր եւս, այսինքն ի Գեքսեմանի, Սրբուհւոյ Կուսին Վերափոխման Տանարը, Ըմբռման եւ Սելովամի եկեղեցիները, Յակոբայ ջրհորի հոյաւեն տանարը եւ այլ բազմաթիւ եկեղեցիներ եւ մասուրաներ իբր լուսապիւռ փարոսներ հիմնարկուեցան, եւ որոնք օրինակուեցան մասնաւոր ֆրասոնեայ համայնքներէ ալ:

Գիտենք, դարերու ընթացքին թեւամի ոյժերու կողմէ թեւ անոնք քանդուեցան, բայց ջերմեռանդ ֆրասոնեայք եւ ասուածասէր թագաւորներ եւ իշխաններ վաղ ընդ փոյթ նորոգած են նոյն աւերեալ Սրբավայրերու եկեղեցիները, որ մեծաւ մասամբ կը մնան մինչեւ ցայսօր: Նոյն եկեղեցիները յաւերժական ապացոյցներ կամ վկաներ եղան Տնօրինական Ս. Տեղեաց հաստատութեան կամ վաւերականութեան:

Աւխարհի ընկերական կեանքի մեջ յայտնի է թէ մեծ անձնաւորութեան մը ամենապոյզն յիշատակներուն պահպանութեան համար մեծ նախանձախնդրութիւն ցոյց կը տուի անոնց կողմէն՝ որ բարեբարեալներն են նոյն անձնաւորութեան. եթէ այդպէս է աւխարհի ո՛ր եւ է անձնաւորութեան համար, ապա աւխարհի Փրկչին՝ Յիսուսի լուսապայծա՛ռ յիշատակները — Տնօրինական Ս. Տեղերը որքա՛ն պիտի փառաւորուէին ու անկորուստ պահպանուէին Յիսուս-Քրիստոսէ բարեբարեալներէն, առաւելաւներէն, ու անոնց յաջորդներէն եւ Յիսուսի սիրովն ապրող մաքուր ֆրիսոնեաներէն: — Նոյն Տեղերուն պահպանութեան, պանծացումին եւ ի համբոյր երկրպագութեան՝ չէին կրնար արգելք ըլլալ ո՛չ հեռաւորութիւնը եւ ո՛չ նանապարհի վտանգները. ոմանք մօտէն, այլ հեռուէն, ուրիշներ կեանքի զոհողութեամբ եւ մըշ-